

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի
ղեկավարի 2018 թ-ի տարեկան հաշվետվությունը՝ կայացած 30.01.2018 թ-ին. ժամը
15.00-ին:

Նախագահությամբ՝

Ռ. Մարգարյանի

քարտուղարությամբ՝

Գ. Հովհաննիսյանի

մասնակցությամբ՝

Արմավիր գյուղական համայնքի հաշվետու գեկուցմանը ներկա են գտնվում համայնքի
ավագանու անդամները, համայնքապետարանի աշխատակազմը, համայնքի ենթակա ՀՈԱԿ-
ների տնօրենները և աշխատակիցները, ինչպես նաև համայնքի մոտ 30 բնակիչներ:

Լսեցին - Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյանի 2018
թվականի տարեկան հաշվետու գեկույցը:

Պարոն Ռ. Մարգարյանը հաշվետու գեկույցում ներկայացրեց 2018թ-ի ընթացքում կատարած
աշխատանքների վերաբերյալ, բյուջեի մուտքային և ծախսային կատարողականը, ինչպես նաև
համայնքին վերաբերվող հիմնախնդիրների և բազմաթիվ այլ խնդիրների մասին:

«Վարչապետի հանձնարարականի, ինչպես նաև «տարածքային կառավարման և
գարգացման նախարարի հանձնարարականների, կապված «Մաքուր Հայաստան»
գործողությունների ծրագրով նախատեսված և ղեկավարվելով «Աղբահանության և
սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-
րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Արմավիր համայնքում իրականացվել են
սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքներ: Արմավիր համայնքում
շաբաթական երկու օր համայնքի կողմից հավաքվում է բնակիչների կենցաղային աղբը և
թափվում է համապատասխան աղբավայր: Արգելվել է չնախատեսված վայրերում գոմաղբի և
կենցաղային աղբ թափելը: Մի քանի անգամ հիմնովին մաքրվել է Արմավիր գյուղի գերեզման
տանող ճանապարհի և Արմավիր_Արևիկ տանող ճանապարհի եզրերի աղբակույտերը:
2018թվականի ընթացքում մի քանի անգամ կատարվել է համահայկական շաբաթօրյակ, որին
մասնակցել են համայնքի բոլոր կազմակերպությունների, տնտեսավարող սուբյեկտների
աշխատակիցները և բնակիչները: Այդ ընթացքում հիմնովին մաքրվել է Արմավիր համայնքի
աղբավայրը և նրա հարակից ճանապարհները, մաքրվել է համայնքի բոլոր փողոցները,
շրջակա տարածքները և հուշարձանները:

2018թվականին ընթացքում վերանորոգվել է խմելու ջրի ջրամատակարարման ցանցը,
շուրջ 200 մ երկարությամբ: Վերացվել են մի շարք վթարներ:

Արմավիր համայնքի ենթակայության տակ են գտնվում Արմավիրի մանկապարտեզը, Արվեստի դպրոցը, Մշակույթի տունը և դասական ոճի ըմբշամարտի թիմը, որոնք ֆինանսավորվում են համայնքի բյուջեից: Գործում են քինգ-բոքսի, ըմբշամարտի և պարի խմբեր:

2018թվականի ընթացքում կատարվել են մի շարք տոններին նվիրված միջոցառումներ, որոնք են՝ հունվարի 28-ին Հայկական բանակի օրվան նվիրված, մարտի 8-ից մինչև ապրիլի 7-ը կանանց միամսյակին նվիրված, մայիսի 8- 9-ին և 28-ի՝ հաղթանակների օրվան նվիրված և սեպտեմբերի 21-ին՝ անկախության նվիրված տոնակատարությունները: 2018թվականի նոյեմբերի 7-ին մեծ շուքով նշվեց Արմավիր դպրոցի հիմնադրման 180-ամյակը, որի համար համայնքի բյուջեից փոխանցվել է 100,0հազ.դրամ: Ամեն տարի համայնքի բյուջեից գումար է փոխանցվում համայնքի դպրոցում սովորող անապահով երեխաների դասագրքերի համար: Այս տարի համայնքի բյուջեից փոխանցվել է 130,0հազ.դրամ: Ամանորի նախորդին տոններին նվիրված համայնքում կազմակերպվել է միջոցառումներ՝ որտեղ մասնակցել են համայնքի երգի և պարի ինքնագործ խմբի երեխաները, ինչպես նաև <<Արմավիրի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի սաները, որոնք գեղեցիկ և բարձր մակարդակով ելույթ են ունեցել: Համայնքի շուրջ 450 մանկահասակ երեխաներին բաժանվել է նոր տարվա նվերներ:

Արմավիր համայնքը ունի 3582 բնակիչներ: Համայնքի բյուջեի սոց.հատկացումների ծրագրով 28 անապահով ընտանիքներին հատկացվել են 1390,0հազ.դրամի օգնություններ՝ 10ընտանիքներին 770,0հազ.դրամ մահվան թաղման ծախսերը կատարելու և 18 սոց անապահով ընտանիքներին՝ 620,0հազ.դրամ տարբեր գումարի չափով՝ իրենց ընտանեկան կարիքները հոգալու համար:

2018 թվականի հողի հարկը հավաքագրվել է 51,1տոկոսով, գույքահարկը 146,5 տոկոսով, տեղական տուրքերը՝ 115,0 տոկոսով, վարձակալական վարձավճարները՝ 100,2%-ով: Ընդամենը համայնքի վարչական բյուջեն կատարվել է 99,2%-ով:

Համայնքի հնգամյա ծրագրով և համայնքի տարեկան պլանով նախատեսված ծրագրերից կատարվել են մի շարք աշխատանքներ՝ խմելու ջրի ներքին ցանցի բազմաթիվ վթարված հատվածների նորոգումները:

Տարիներ շարունակ, համայնքի հիմնախնդիրներից մեկն է եղել խմելու ջրի նոր ներքին ցանցի կառուցման, Արմավիրի մանկապարտեզի տանիքի և շենքի հիմնովի վերանորոգման, ճանապարհների նորոգման և ասվալտապատման, ինչպես նաև Արմավիր եկեղեցու կառուցման հարցերը:

2018թվականի ընթացքում խմելու ջրի ներքին նոր ցանցի կառուցման համար Հայաստանի Հանրապետության <<Տարացքների զարգացման>> հիմնադրամի հետ արդեն կնքվել է համաձայնագիր 50,0միլիոն դրամ արժողությամբ, որից համայնքը իր կողմից ներդնելու է 10,0միլիոն դրամը, իսկ 40,0միլիոն դրամը կառավարության կողմից: Այն առայժմ կատարվելու է համայնքի ջրագծերի 70%-ի չափով, իսկ մնացած 30%-ը կլինի հետագա ծրագրով:

Արմավիր համայնքը իր պարտավորություններից արդեն հիմնադրամին փոխանցել է 4557,0հազ.դրամ: Նաև նախագիծ-նախահաշիվ կազմելու համար՝ 1250,0հազ.դրամ:

2019թվականի գարնանը կսկսվեն ջրագծերի աշխատանքները:

Համայնքի ղեկավար Ռ.Մարգարյանի հաշվետու զեկույցից հետո արտահայտվեցին համայնքի ավագանիներ՝ Ռուբեն Ազիզյանը, Թամարա Պողոսյանը, Եղիազար Ասմարյանը և համայնքի բնակիչներ՝ Ռուբեն Հովհաննիսյանը, Ստյոպա Հարությունյանը և Գագիկ Նավասարդյանը, որոնք նշեցին, որ 2018 թվականի ընթացքում, չնայած համայնքի բյուջեի սուղ պայմաններին, այնուամենայնիվ համայնքի ղեկավար, պարոն Ռ, Մարգարյանը ամեն կերպ աջակցում է հայնքի կարիքավոր թե, երեխաներին և, թե ընտանիքներին, և ամեն ինչ անում է, որպեսզի համայնքում նոր աշխատատեղեր ավելացվի: Ուրախակի է, որ վերջապես Արմավիր համայնքը կունենա վերանորոգված խմելու ջրի նոր ներքին ցանցեր:

Հույս ունենք, որ հետագայում Արմավիր համայնքը կդառնա ավելի գեղեցիկ, զարգացած և բարեկեցիկ համայնք:

Արմավիր համայնքում 2018թվականի հունիս ամսին Արմավիր համայնքու տեղացած կարկոտից 50%-ի չափով վնասվեց 25,0հա, ցանքատարածություններ և ծառապտուղներ, որի համար պետությունից ոչ մի օգնություն չստացվեց:

Համայնքում հողի և գույքահարկի վարձավճարները դժվարությամբ է հավաքագրվում, քանի որ համայնքի բնակիչների գրեթե 80-90տոկոսը վարկառուներ են: Ենթադրելով վարկային կազմակերպություններում:

- Այնուհետև խոսվեց Արմավիր համայնքի հիմնախնդիրների մասին, որոնք են՝
1. Արմավիրի մանկապարտեզի տանիքի և շենքի հիմնովին վերանորոգում.
 2. Ճանապարհների նորոգում
 3. Արմավիրի եկեղեցու կառուցում:

Արմավիր համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյանը հորդորեց համայնքի բնակիչներին՝ ակտիվություն ցուցաբերել սեփական մուտքերի՝ հողի հարկի, գույքահարկի, ջրի վարձավճարների հավաքագրման գործընթացին, ինչը կնպաստի բյուջեի կատարմանը, որի միջոցներով կլուծվի համայնքի հիմնախնդիրները:

Համայնքի ղեկավար՝
Քարտուղար՝



Ռ.Ֆ.Մարգարյան
Գ.Մ.Հովհաննիսյան

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 2018թ-ի համայնքի ղեկավարի տարեկան

Համայնքի համայնքային բյուջեի եկամուտների և ծախսերի կատարողական՝ 2018թվականի տարեկան . առ. 01.01.2018-01.01.2019թթ.

Եկամուտների տեսակը	տարեկան պլան	տարեկան փաստացի կատարված
Հողի հարկ	6000.0	3065,7
Գույքահարկ	3150,0	4614,5
Վարձակալական վ/վ	2040.0	2041,7
Դոտացիա	59648.0	59648,6
Տեղական տուրքեր	70.0	80,5
Դրամաշնորհ	3966,3	3967,3
Տեղական վճարներ	255,0	3036,1
Այլ մուտքեր	93,7	454,4
Ընդամենը վարչական բյուջե	77518,0	76908,4 կատարվել է 99,2%-ով

Վարչական բյուջեի ծախսեր.

Արմավիրի գյուղապետարանը 2018 թվականի տարեկան կտրվածքով կատարել է հետևյալ ծախսերը:

- 1.Վճարվել է ընթացիկ աշխատավարձ 29780,9 հազ.դրամ
- 2.Անապահով ընտանիքների օգնության գումար է վճարվել 1390,0հազ.դրամ
- 3.Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում 19163,3 հազ.դրամ
- 4.Մանկապարտեզ 8650,0 հազ.դրամ
- 5.Միջնակարգ կրթություն 250,0հազ.դրամ.
- 6.Արվեստի դպրոց 12679,0հազ.դրամ.

Ընդամենը ծախսեր՝ 75725,3 հազ.դրամ

Ֆոնդային բյուջեի տարեկան պլան 6320,0հազ.դրամ կատարված 3283,0 հազ.դրամ
 ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Ռ.Ֆ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

